

## Ս. ՆԱԶԱՐԵԵՎԻ ՆԱՄԱԿՆԵՐ

**Մեծապատիւ բարեկամի մերում Տետուն Եփրեմայ խոհական վարդապետի Սաֆարեանց բազմասցի առ ՚ի մէնջ ողջոյն սիրոյ և յարգանաց:**

**Զընծայեալս առ ձեզ ՚ի քանի մի եօթնեկաց հետէ զնամակ յուսով եմ թէ ստացեալ իցէք անկորուստ. բայց թէ որ համարումն ձեր և այլոց զմերոյս երկասիրութենէ ՚ի դատաստան ձեր մատուցելոյ իցէ՝ անգիտանամք տակաւին, թող զոմանս ընդհանուր յայտարարութիւնս՝ ժամանեալս առ մեզ ՚ի կողմանէ Պ. Խաչարոյ Յովակիմեան Լազարեանց. Յորոց ոչ եղեւ կա-**

**Զորս տարի շարունակ տպագրելով Առւմայշ ի էջերում պրօֆ. Ս. Նազարեանցի նամակները Պ. Բուրգի յաջորդ Եփրեմ վարդ. Ալթընեանին ուղղած, այսօր երբ տպում ենք վերջինները դոցանից՝ աւելորդ չենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներին այդ հովուի մասին, քաղելով այն արքեպիսկոպոս հայոց Ներսիսից կազմած ինքնագիր ծառայական ցուցակից.**

**Եփրեմ վարդապետը իւր ուսումը ստացել է Բուխարէստ և Էջմիածին 1812 թուից մինչև 1838. մտել է հոգեւոր կոչման մէջ 1820 յուլիս 15-ին Քիշն քաղաքում. 1824 ին ձեռնադր ուել է Էջմիածնում կիսասարկաւագ և աւագ սարկաւագ 1829 ին. այդ օրից կատարել է ս. Էջմիածնի սինօդի ատենադպրի և հայոց լեզուի ուսուցչի պաշտօնները մինչև 1839 թ. յուլիսի 18, երբ վարդապետ ձեռնադրուելով ուղարկուել է Ս. Պ. Բուրգ հոգեւոր կառավարութեան անդամի պաշտօնով:**

**Կիսասարկաւագ ժամանակ եղածէ օգնական Բարսեղ Արքակոպոսին հայերին Պարսկաստանից Ռուսաստան վերաբնակեցնելու գործում:**

**Պ. Բուրգ նշանակուելով՝ բացի բնակարանից և վառելիքից նշանակուել է նորան եկեղեցական արդիւնքներից ուսմիկ տարին 2000 ուուրի ըստ նշանակելոյ եկեղեցական հոգաբարձութեան համաձայն նշանակութեանց առաջին արքեպիսկոպոսաց ս. Պ. Բուրգայայտուրց անտի լինութեանց եկեղեցւոյն յանձնեցեալ ՚ի նախնեաց կառավարութեանց յաղագս ամենայն հարկաւորացն եկեղեցեաց և եկեղեցականաց: „**

**Ման. Խմբ.**

բողութիւն ստուգել զկամիլ կամ զչկամիլ տպագրութեան մատենիս առ ՚ի դատաւորացդ որ ՚ի Պետրովը, Ընդդէմ քաղաքական օրինաց չկը մեր խօսեցեալ ինչ, բայց այս ՚ի յառաջարանի անդ լի կատարեալ հայրենասիրութեամբ և քաջ ճանաչելով զազդին գոգում՝ բազում համարձախօսեցաք ՚ի շնորհս յաշխարհիկ լեզու դպրութեան, զամենայն զվարկածս մեր պընդելով և հաստատելով մեծամեծ փաստիք առելովք յընդհանուր նկարագրէ ուսմանցն ընթացից Եւրոպէականացն արանց: Զանփոյթութիւն հայ մարդկան զշինութենէ դիւր և յաջողակ գործարանի իմանալի հաղորդակցութեանց ՚ի մէջ ազգիս, որովծածկեալքն մինչև ցայսօր ժամանակի մարթիցին յատեան հրապարակի հանդիսանալ և տեսանել յիւրաքանչիւր արանց, ոչ թողաք առանց բանի կշտամբանաց, որպէս և զհակառակրդս յաշխարհիկ բարբառ դպրութեան յասպարէզ անցուցեալ դատեցաք ըստ արժանաւոյն: Չիք այս տեղի խօսիլ ՚ի ժամուս զյառաջարանիս բոլիանդակութենէ՝ եթէ այն մերկապարանոց առաջի կայ Պատուականիդ, ուստի մի ըստ միոջէ կարողութիւն է տեսանել զամենայն խօսեցեալսն առ յինէն, և դատել անաշառապէս և անպղտոր մտօք: Խնդի՛ր էր իմ ՚ի ձէնջ տալ ինձ փութով տեղեկութիւն՝ թէ ոչք ոմանք բաց ՚ի ձէնջ կացուցեալ իցեն դատաւորք ՚ի վերայ իմոյ աշխատութեան և թէ զիմրդի ըն տեսանի:

Մատուցանելով Պատուականիդ առ յիմոց ընտանեաց զողջոյնս բազմապատիկ եմ և եղէց

միշտ զձեզ սիրող և յարդող  
Ա. Նազարեանց՝ վարդապետ:

՚ի Հոկտեմբերի 6  
յամի տեառն 1850  
՚ի Մոսկվա:

Մեծապատիւ բարեկամի մերում Եփրեմայ իսհական վարդապետի և ասպետի խնդալ

Արդոյ նամակ պատուականիդ՝ գրեալ յերբորդ թուականի ամսոյս, չնորհիւ Նիկողայոսի Շանշիեանց ժամանեաց առձեզ ՚ի վեշտասանն, տեղեակ զիս առնելով զգիտելեացն որ յի-

մոյս աշխատասիրութեան մասին։ Նմանապէս հասին առ մեղ ախորդարար լուրք զձերոյ քաղցը ընդունելութենէ տէր Սովուէս քահանայի Սայաթնեանց յորոյ ի սակս էր մեր առ ձեղ խնդիր գրաւոր ի վերջին ընդ ձեղ նամակախօսութեանս։ Փոխարէն կրկին բարեկամական առ մեղ արդեանցդ զմերս առ ի խորոց սրտի շնորհակալիս ընկալնուկ աղաչկը։

Խոռվիմք և ոչ լսերով ի ձենջ թէ Պարոն Խողարաշեանցն անհաւան ընդ մերս երկասիրութիւն գտեալ խրատէ զքաջափայլ տեարս Լազարեանց խափանարար լինել տպազդրութեան գործոյս, կամ առաքել զայն ի քննութիւն առ վեհափառ կաթողիկոսն։ զառաջինն ոչ ներեն օրէնք տէրութեան, վասն զի, եթէ գրուած ինչ ոչինչ պարունակէ յինքեան ընդդէմ կառափարութեան (քաղաքական կարգաց և եկեղեցւոյ), ոչ կարէ խափանիլ ի տպազդրութենէ, իսկ զմիւսն չէ համարձակ առանց իմոյս թոյլտուութեան առնել ըստ կամաց և հաճոյից, Յառաջաբանութիւն մատենիս կարի խիստ թուի քեզ. բայց որպէս վէրք աղդին, նոյնպէս և սպեղանին, բայց չէ և չէ պարս երբէք ի մոռացօնս լինել թէ վիրաբոյժ բանազէտ հատոյ սուր ի ձեռին կամ կարմրացուցեալ երկաթ յաջն ոչ զկորուստ ախտացելոյն դիտէ. քաւ և մի լիցի. այն մին հատանէ, իսկ միւսն խարէ, բայց ողջամիտ խորհրդով և զհիւանդին փրկութիւն նըկատերով։ Վասն նեխնեալ վիրաց մերոց պէտք էին սրոյ և հրաշէկ երկաթոյ առ. ի բաց հատանել և ի բաց խարել զապականեալս յանդամոց՝ զի մի բոլոր մարմինն անպիտանացեալ կորիցէ. Արդեօք վրիպակ է զատողութիւնս՝ եթէ ուղիղ և ճշմարիտ, ի ձերդ թողում խոհականութիւն. զոր ինչ միանգամ խօսիմք և խօսեցաք, խօսեցաք այն զօգուտ ամենասիրելի աղդին մտածելով, ոչ զնա թշնամանել կամելով, Զարմանամք զարմանս մեծ՝ զի Հայք յայդալիսի բանից մերոց բերին ի կարծիս՝ բամբասասէր միտս ունիլ մեր, որ չէ այդպէս։ Եթէ ներեալ է այլոց ունիլ սեպիական կարծիս և տեսութիւն իւրեանց, ապա և ինձ պարտի նոյն ներեալ լինիլ. զայս պահանջեն անհրաժեշտ օրէնք արդարութեան և ամեննեցուն միապէս և համահաւասար խոկալ և գործել չիք հնարաւորութիւն, մանաւանդ թէ և վնասակար իսկ է։ Մի ի մարդկանէ՝ ըստ իմոյս համարման՝ մոլորեալ է, ընդէք և ինձ ընդ նմա մոլորիլ. պարտ է թոյլ տաէ հակառակացն կարծեաց ի հանդէս հրապարակի ելանել, ուր ծանուցեալ լիցի և վրիպակ և ուղղութիւն այլախոհից իւր-ա-

քանչիւր։ Այսպէս յառաջացան յուսմունս և ի գիտութիւնս ազգք եւրոպէականք, և ոչ այլապէս։ բայց առ Հայս ամենայն տարածայնութիւն յուսումնական խնդիրս անդէն անդ բանբասանք քարողի և ցոյցը անսիրելութեան և թշնամութեան առ միմեանը։ Հարցանեմք, յո՞ւ երեսս մատենի մերոյ բամբասեցաք զէմինն։ Ցրելով զանհիմն և անալի բանս Որուսին Սլիվցկիոյ, որ ի վերայ հիման ընթերցանութեան մատենի տպելոյ ի Մոսկվա յամի 1849՝ կամի ապացուցաննել զանպիտանութիւն աշխարհիկ բարբառոյ Հայոց և զրպարտէ լըբաբար զՀայս տաճկաստանու, որպէս զի սոքա առ ի ստացնւմն արծաթոյ վերին աշխարհիկ հայկարանութեամբ ի զրուածս իւրեանց, ցըելով՝ ասեմ՝ զրանս Սլիվցկիոյ՝ ծանօթաբաննեցաք աւազափ միայն ո՞չ Տպազրող ընթերցանութեան մատենին և ոչ պ. Սլիվցկին իշխան ինչ են առաջնորդ լինել Հայոց ի հանդիսին նոցայն լուսաւորութեան ըստ պիտոյից այժմեան ժամանակաց, այլ թէ շատ է՝ Հայոց առանց յաջ և յանեակ խոտորելոյ՝ միտ եղեալ ընթացից լուսաւորութեան կըրպէականացն ազտնց նոցին զհստ կըթիլ անմոլար շաւղաց։ Նոյնպէս պատասխաննեցաք Սլիվցկիյ ուուսին՝ որ օրինակ բերէ հայոց զՀայս Հնդկաստանի, վասն զի սոքա ականաւոր Հայկաբաննութեամբ իւրեանց ի հասարակ կենցաղս և ընտիր բանաստեղծութեամբ իւրեանց հաւասարին Հնոց հեղինակաց։ թէ զանկարսն առ ի հսկայից Եւրոպիոյ (որ է՝ լուսաւորել զժողովուրդս հին մեռեալ լեզուաւ) ի կարելիս դասել առ ի թղկահայոց Հնդկաստանու լէ ապաքէն գործ առն ըըտածողի եւ ուսելոյ, այլ խելազարեալ իմաստակի։ Մի թէ այս ամենայն՝ բանբասանք իցէ. վայ ինձ. Այլ եթէ կամիս դու լըսել բանբասանս, ընթերցիր զբանս պարոն կմինայ ի գործիւն անդ ճառին՝ մակազրելոյ՝ վէաք Հնոյն հայաստանի։ Առ մեզ չիք, ասէ, պատմութիւն գրականութեան. զոր ինչ հայ և օտարազգի հեղինակը մինչև ցայսօր ժամանակի գրեցին ըստ այսմ մասին՝ լոկ տեղեկութիւնք են վասն մատենագրաց և գործոց նոցին և այն թերի բազմօք։ Քննել ըստ կանոնաց մակացութեան զմատենազրութիւնս մերոցն և ցուցանել զյատկութիւնս և զնշանակութիւն իւրաքանչիւրոցն ի նոցան է՝ որոշելով ի նոսին զոր ինչ հեղինակին է սեպիական և զոր ինչ առ դարն՝ յորում կեցին վերաբերելի, այդպիսի երկասիրութիւն՝ ցաւ է ինձ ասել՝ անծանօթ է մերոցն (բայց ծանօթ միում միայնում պարոն կմինայ. և որ ինչ հայազգի մատենագիլք՝ յորոց մի է և մեղաւու-

ըստ, զայդպիսեաց գրեցին, ոչինչ գիտացին զայդօրինակ տես-  
սութիւն հայ հեղինակաց): Եւ որովհետեւ չէ ուլուք ձեռնամուխ  
լեալ յայդպիսի գործ, յոյր սակս և յոլովք ի բանասիրական  
խնդրոց՝ առ հայ դպրութիւն վերաբերեալք, մինչ ցարդ անլու-  
ծանելի մնան. ի սոցին սակի և զազային երդս ուսնել պարտ է՝  
որոց դոյութիւն առ մեղ՝ չդիտեմ էք վասն միակամ յամենե-  
ցունց ժիստի. այդ կարծիք՝ ներելի ի շրթունս օտարաց, ան-  
թողի է մերայոց՝ որք ինքնակամ հրաժարին ի հայրենի ժառան-  
գութենէն: Անա քեզ բանբասաննք, անամօթ զրպարատութիւն և  
սեաւ խարէսութիւն, այն հայհոյութիւն իսկ. Ազգային երգս լեալ  
առ Հայս կարէ ամենայն ոք տեսանել ի պատմութենէ Մոլսի-  
ոկ խորենացւոյ. այդպիսի ազգային երգոց առնէ յիշատակու-  
թիւն 15 ամօթ յառաջ ի բազում տեղիս հնախօսութեան իւրոյ՝  
Հայր ինջիշեան ականատոր հայրն միխթարեան, զայդպիսեաց  
իսկ երգոց յիշէ գերմանացին Նէյման յիւրումն պատմութեան  
Հայոցս դպրութեան տպելոյ ի Լէյպցիխ յամի 1836, նոյնպէս  
Բլում անուն պրօֆեսոր Դորպատեան յիւրումն զրուածի՝ Հե-  
րոգոտոս և Կտեղիսա մակագրեալ, նոյնպէս Ռիթթեր աշխար-  
հագիր, գերմանացի ի հատորն՝ որ գՀայաստաննեայց՝ բերէ բառ-  
առ բառ զնոյն իսկ հատակատորս հայ երգոց՝ որ առ Մովսե-  
սի խորենացւոյ տեսանին, և այն ? ամօթ յառաջ քան զպարոն  
էմինն: Ստեփաննոս Նազարեանց առնէ նոյնպէս յիշատակու-  
թիւն զայդմանէ յիւրումն ճառի տպելոյ յամի 1844 ի Ղազա-  
նեան երկասիրութիւնս համալսարանին: Եւ ի վերայ այդր ա-  
մենայնի դոյութիւն ազգային երգոց առ Հայս՝ ասէ էմին՝ միա-  
կամ ժիստի յամեննեցունց՝ ի մերայնոց և յօտարազգեաց: Ա-  
սասցենս այժմ ովէ է բանբասանէրն, ովէ է կուրացեալն և ամ-  
բարհաւածն, յամենայնի: Բայց դու լուեալ ուսիր զիմս վեհան-  
ձնութիւն առ պատուական էմինն: Ես՝ որ դատաւորս է կար-  
գեալ ի վերայ աշխատութեան առնդ այդորիկ մինչև տպեալ  
ոչինչ խոռովցայ ի հոգի ընթերցեալ զայդ ամենայն ծայրէ ի  
ծայր և պատասխանեալ ցկառավար ուսումնարանին՝ թէ առ ի  
տպագրութիւն գործոյ էմինայ չիք արգելք և ոչինչ, իսկ այդք  
այժմ զորոց չիք իմ խօսեցեալ հայհոյութեամբ՝ զլանան ցու-  
ցանել ինձ զայն շնորհ՝ զոր ես ոչ տարակուաեցայ իմումս ցու-  
ցանել հայհոյողի և անարգողի: Եւ ոչ այս չափ միայն, այլ և զա-  
մենայն զբանս իմ բամբասանս համարին: Պարոն էմինայ կա-  
րողութիւն էր անամօթ լրբութեամբ տգիտացուցանել զգիտունս՝

որք ամօք բազմօք յառաջ քան զնա գիտէին և քարողեալ էին զայն՝ զոր նա այժմ միայն ուսեալ քարոզէ իր, և ինչ մի նորագիտ, բայց ինձ ամենայն ինչ ի յանցանս զնի. Եթէ է մեր դատողութիւն, դատեսջիք զբարեկամս ձեր. Եթէ ոշ. ոչ ևս յաւելից խօսիլ յունկն ազգի մերոյ, ըստ որում ամենայն ինչ յունկը մեռելոց խօսեցեալ լինի և իմ միշտ ի սնոտիս դեգերիլ շիք ախորժակ:

Զորդիս պարոն Ամիրովի Գօրեցւոյ՝ զյանձնեալսն առ ի պատուականէդ իմումս պաշտպանութեան չիք տեսեալ իմ տակաւին. բայց յորժամ մուտ արասցեն դոքա ի դպրոց քաջափայլ տեարց Լազարեանց, ոչ գանդաղեսցուք վերահասու լեալ որպիսութեան նոցա խնամ տանել նոցա որչափ ինչ բերեն կարք մեր, ոչ առ ի զձեղ չնորհապարոս մեղ կացուցանել, այլ զմերը հայրենասիրական պարտականութիւն առ որդիս ազգի վճարել:

Խմայնովիք հանդերձ ողջունելով զմեծապատիւ բարեկամդդ՝

եմ և եղէց

միշտ հարազատ

ձեր Ստեփաննոս Նազարեանց՝ վարդապետ:

'ի 17 Հոկտեմբերի

1850

'ի Մոսկվա

Մեծապատիւ խոհական բարեկամիդ մերում

Բազմասցիք առ ՚ի մէնջ ողջոյն  
և բարեմաղթութիւն ՚ի նոր տարին:

Զհիւանդութենէ իմոյ պարանելոյ զիս ՚ի վերջէ հոկտեմբերի մինչև ցայժմ կէս մի ի մահիճ սակաւայոյս ախտի, կէս մի յանել բանդ օթևանիս ոչինչ շատաբանեմ. ազդեցից միայն ՚ի գիտութիւն պատուականիդ թէ ամենակալն Սստուած հաւանեալ փորձել զիս տիսուր արկածին, ողորմեցաւ ինձ և իմոց զաւակաց պարզելով զիս վերստին ամենավարան իմոց ընտանեաց. Պատճառ հիւանդութեանս որ այս՝ մերձ էր ՚ի վտանգել.

զկենդանութիւն իմ, էր տալաքէն մաշումն կենսական ողեաց  
ի մերումս ամենածանր պաշտաման՝ ժամս 24 յեօթնելի պարա-  
պելով դասասացութեանց յուսումնարանի Լազարեանց՝ թող զայլ  
զբաղմունս որ տուտնին և որ արտաքրոյ, Անսովիոր այսպիսի կե-  
նաց լինելով (զի ի Ղազանեան համալսարանին՝ հինդ և եթէ  
քաջ, ժամս վեց յեօթնելի ուսուցանելով վայելէաք յուսումնա-  
կան անդորրութեան) գուշակէաք այն զծանր պատահար մեր՝  
որով ուսեալ զչափ և զստհման մերոյս տանողութեան հարկա-  
դրիմք այսուհետև թեթեացուցանել զշեռն մեր՝ զոր հաճոյք  
օտարաց առանց բանի օրինաց ըստ կամաց և բմաց ծանրա-  
ցուցին ի վերայ մեր էշ բեռնաբարձ քան զուսումնական ոք  
զմեղ համարելով:

Ստացաք վերստին զաշխատութիւն մեր ի Պետերբուր-  
քայ հանդերձ թղթով Քրիստափորեայ Լազարեանց. յորում գրի  
մեղ թէ չիք նոցա իշխանութիւն թոյլ տալոյ տպել որեիցէ հայ  
մատեանս, որոց քննութիւն անկանի վիճակաւոր Արքեպիսկոպո-  
սին Մոսկվայի և սրբազնան կաթողիկոսին: Որ և է այս մեկնա-  
բանութիւն, և ես չեմ կոյր առ ի տեսանել զիսկութիւն իրին.  
Բայց լուեմ, թէպէտ մտածել ոչ դադարիմ: Բայց ասայից  
պատուականիդ՝ թէ այդպիսիք չեն բաւական խռովեցուցանել  
զիս, անդորր է սիրտ իմ և անվրդով հոգի իմ. կամք էր մեր  
օդտել աղգին. ոչ կամին. օգտեսցուք և ոչ, այլ տացուք զանձն  
մեր յայլ ուսմունս վասն մեր միայնոյ:

զձերդ  
Զեղ յարդող բարեկամ  
զՍտեփաննոս Նազարեանց

ի յունվարի 4 թուականի  
յամի 1851.  
ի Մոսկվա

Խոհական պատուասիրեալ բարեկամիդ մերում Հօր Եփրեմայ

Բազմացի առ ՚ի մէնջ ողջոյն բազում  
բարեմաղթութեամբք հանդերձ.

Տենչալի վերջին առ մեղ նամակիդ և բարեկամական ծա-  
նօթատուութեանցդ մեղ ոչ արաշաք մինչև ցայսօր պատախա-

նի և այն՝ խորհրդով՝ և ոչ դիպուածով, վասն զի զմերոյս հոգուոյ խաղաղութիւն նախապատիւ քան զայլն ամենայն համարելով լուել քան խօսել հաւանէաք. թո՞ւ զի անյուսալի մեզ թուէր զիմոց մտաց և սրտի ուղղութիւն մերկանդամ' առաջի ձեր կացուցանել, որպէս և զայլոցն առ մեզ խարդախ և երկրան ընթացս վկայութեամբ հաստատել, „Զայրանայր՝ ասէ՛ հոգի Պաւղոսի՝ զի տեսանէր զքաղաքն ՚ի կուապաշտութեանն. իսկ իմն զի՞նչ. բայց որպէս տեսանեմս՝ փոփոխեալ են ժամանակը. զայրանալին և խոռվիլն ՚ի հոգի առ Պաւղոսի չէր դատապարտելի. այլ իմն՝ վայ ինձ՝ լինի առիթ չար բանբասանաց զինէն և ամենայն տեսակ ատելի բաղրաղայից: Բայց որպէս կարծեմ չիք ընդ որում զայրապիսեաց փաստաբանել արժիցէ զաշխատութիւնն, արդարութիւն ոչ ուրեք առ մեզ. այլ կեղծաւորութիւն և խաբերայութիւն յամենայն տեղիս. և ուր անարգեալ և յերկիր կոխեալ բանք արդարախորհուրդ հայրենասիրի, իսկ սմին հակառակ բարձրացուցեալ և մեծացուցեալ մեղքաշուրթն մատնողք ազգի. զինչ հապա տեղի մեզ այլ մտածութեանց և խօսից. քննութիւն չիք, քննողը չիք, զի վերացեալ է բանն Աստուծոյ յաղքէս. մնան միայն չարախօսութիւնք պիդ և անաստուած շրթանց:

Զաշխատութիւն մեր՝ զինի այդքանեաց անախորժ լրոց և ծանօթաբանութեանց առ ի ձէնջ առ մեզ հասելոց ուստի հարկաւ ի մէջ յարեան կասկածանք զարդարամտութենէ մերայնոց, հուսել յետոյ ձերով իսկ նամակաւ քաջակերս առեալ այլ և համարձակութիւն առ ի թեմակալ Առաջնորդէ մերմէ ստացեալ՝ յուղարկեցաք ի դատաստան նորին. և զարմանք ոչ փոքր ունին զիս, զի անախորժութիւն և ոչ մի տեսեալ եղև յառնէդ, որպէս.... Սրբազն հայլն ընթերցեալ զբանս իմ և գտեալ զնոսա բանաւորս և արդարացիս, թոյլ տայ ինձ պատուասիրահան նամակաւ հանդերձ ի տիպ անցուցանել զաշխատութիւն իմ, յեւս պիտանիս, այսինքն ի նորն հայկաբանութիւն խրախոյս և հրաւէր սիրողապէս ինձ մատուցանելով. ուր է ապա այն չար դատապարտութիւն, զոր այլք զիս դատապարտել ոչ ամաշեցին. Մտածել և խօսիլ զոր չէ ընդդէմ ոչ կրօնի և ոչ տէրութեան, դոյ և պարտի դոլ համարձակութիւն. արք մասնաւորք, զորոց խօսեցեալ լինի կամ գովութեամբ կամ պարսաւանօք՝ ինքնին կարեն արդարացուցանել զանձինս, եթէ արդարք. իսկ եթէ ոչ. ապա ոչ յանիրաւի նոցա պատահին կշտամբանք բաց

այտի՝ առ իս չիք յիշատակութիւն արանց առանձնականաց, այլ  
ճառն ընթանայ ընդհանրապէս. եթէ այլոց համարձակ է խօ-  
սել զոր ըստ քմաց և կամին, ինձ ընդէր ո՛չ ընդարձակ բանա-  
ւոր փաստաբանութեամբ. բայց այլոց շնորհել զխօսելն և զիմ  
կապել զիեզու. այդ բարբարոսութիւն է և ոչ մարդկութիւն.   
և որ կամին զյառաջատուութիւն ազգին յուսմունս՝ պարտի ու-  
րախամիտ ասպարէզ բանալ տարածայն կարծեաց և բանախօ-  
սութեանց, ուր միայն կարէ հանդիսանալ ճշմարտութիւնն: Այս-  
պէս և ոչ այլազդ հասին նւրովպացիք յայն կատար լրութեան  
և բարդաւաճանաց՝ յոր հասին:

Աշխատութեան իմոյ պատրաստք եղիցին փութով երկու  
տովեալ թերթք, ուր բովանդակի յառաջաբանն միայն. հոդ զա-  
մենայն հոգամք, զի իցէ տիպն վայելուզ. Տպագիրն է Գաղղիա-  
ցի Վոլդէմար Գոթիէ, զի Լազարեանց տպարանն չեւ է ի կար-  
գի. բայց զայսոցիկ մի ասասջիք ումեր. կամ է ինձ մերով  
անձնական ծախիւք տպել զմատեան մեր և նուիրել ի յիշա-  
տակ ննջեցեալ որդւոյ Խաչատրյ Յովակիմեանն առ ի ապա-  
ցուցանել՝ թէ ոչ միայն զառնուլն գիտեմք, այլ և զտան կա-  
մակար մտօք: Մասիք մեր եղիցին ընդ ամէն մանեթս 150. իւ-  
րաքանչիւր մի թերթ արժէ 13 մանէթ արծ. առանց թղթոյ:

Սյժմ գամ ի ծանօթաբաննութիւն զորդեզրաց մերոց Ամիրեան  
մանկանց. սոքա ըստ ուսման և վարուց իւրեանց արժանացեալ  
ընտիր վկայութեանց փոխեցին ի վերնագոյն դասատուն պարգե-  
տօք հանդերձ. բայց զորդւոյ Գանջեվայ որ ուսանի արևելեան  
լեզուս ի վեցերորդ դասատան՝ չիք իմ ասել ձեզ միսիթարակա-  
նըս. յառաջադիմութիւնք նորա յընթացս տարեկան ուսումնա-  
ռութեան հաստատին ընտիր ընտիր վկայանշանօք, բայց ի հան-  
դիսի վերջին հարցաքննութեանց ստացեալ է ի գիտութեան-  
տաճիկ լեզուի վկայանշան ամենափցուն որ է 1. և դնողն վը-  
կայանշանի եղեալ է պարոն կմին, որպէս ատի՝ ըստ թոյլտուու-  
թեան վարժապետին նախումովի. պատանին Գանջիել եկեալ  
առիս՝ պաղատէր օգնել նմա. եղեւ առ մեզ խորհուրդ վարժա-  
պետաց. խօսեցայ բազում բայց շահեցայ և ոչինչ. Նախումո-  
վըն ասէր թէ էմինն ինքնին եղեալ իցէ զայն վկայանշան 1.  
և թէ արժանի է Գանջիելն Յ վկայանշանի որ տայ իրաւունս  
տեղափոխ լիներոյ ի վերնագոյն դասատուն, իսկ միւսն պնդէր-  
թէ վկայանշանն եղեալ իցէ ի ներկայութեան և թոյլտուու-  
թեամբ տաճկաց վարժապետին. բայց խնդիրն այն թէ ո՞րպէս

Դանջիելն յընթացս ամի արժանացեալ իցէ ընտիր ընտիր վը-կայանշանից և ի վերջնում հարցաքննութեան՝ վատթարացեալ յայդ չափ՝ թէպէտ ի մէջ բերեալ՝ բայց ոչինչ յառաջեաց. և այսպէս մնայ իրն որպէս կայր: Խառնաշփոթ իրք առ մեզ բազումք. կարդ և կանոն սակաւ. Էմինն առնէ ինչ որ կամի. և պաշտել զպաշտօն դաստիարակի յայսպիսի Բարիլոնեան խառնակութեան միջին ոչ պատուաւոր ինձ և ոչ իսկ ախորժական. յուսայաք բարւոքել զվիճակ մեր և օգտել հայոց՝ գալով ի Ղազանայ և փոխանակելով զպրօֆեսսորութիւնն ի կայսերական համալսարանի ընդ ստորակարդ (Եւ զրամով Եւ աստիճանաւ) պաշտաման առ Լազարեանց. բայց խարեցաք ըստ ամենայնի և զղամք յոյժ յոյժ: Փոխանակ պրօֆեսսորի եղեաք էլ բեռնաբարձ, փոխանակ առն ուսումնականի և պատուելոյ ի շարս գիտոց՝ իրեւ մի յամբոխէ հասարակ վարժապետաց. սակաւ ևն աւուրք մերոյս պաշտաման աստ, բայց բազումք յոյժ՝ փորձք փորձեալք ի մէնջ. Աստուած տուաջնորդեսցէ առ բարին:

Դիշտ հարազատ ձեր  
Ա. Դ. 1)

ի 17 Յունիսի 1851.

Կ Մուկուս.

## ԿԸՐՆՈՅ ՕՎԱՅԻ ԲԸՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Համայն Օվայի գիւղորէից նորապէս սահմանեալ բարեկարգութեան օգտական և պատուիրանական կանոններ, ի Կարնոյ Արժանապատիւ Առաջնորդ Տեառն Կարապետի Առաքելազարդ Սրբազն Արք Եպիսկոպոսէ կանոնեալ՝ և առ մեզ հասեալ. և մեր ամենայն զգուշութեամբ ընկալեալ ի մտի եղաք. մտածեցաք նրբա-

1) Ա. Նազարեանի ինքնաձեռագիր այս նամակի տակ իւր իսկ ձեռքով ստորագրած է այդ երկու տառերը, որ անշուշտ մի պայմանական ստորագրութիւն է: Ծ. Խմբ.